

ՅԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻՐԻ ԽԱՄԱՐ	
Վ. ԽԱՆՈՐ	Ֆր. 1.50
Վ. ԽԱՆՈՐԻ ԳՈՐԻ	2
ԱՐՄԱՏԱՆԻ	2.50

ԿԱՏԱԿ

Գրաթիւնք եւ չեն զրկուիր :
Նամակ դրամ և այլն զրկել հե-
տեւեալ հասցէին .
Վ. ԱՐՁՈՒԹԻՒՆ « ԿԱՏԱԿ » Ի
Վ. ԽԱՆՈ (Պուլկարիա) :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ԿԻ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԼԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на спешающего
„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հատար 7 1/2 Սանթիմ

Administration du journal
„GADAG“
VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Ամէն բան չափ մը ունի :

« Զարպիկի գողը քայրանքին տէրը կա-
խել կը տայ » ըստածը հինցած առած
մէ , իսկ նոր և սխալեմարիք ըստած ի-
րողութիւնը լրբութեան և անամբող-
թեան ծայրագոյն աստիճանին հասնին
ու պատկառելի ու պատկառանք բառե-
րուն իսկ առեւանդուիլ ու պղծուիլն է :

Հ. Յ. Դաշնակցութեան Բաղգանեալ
կեդրոնական կոմիտէի տնտեսաբանի
թուղթիկը՝ այսպէս կը յայտարարէր
անցեալ աւուր մի հրատարակութեամբ ,
« Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմակեր-
պութիւնը հաստատ հիմքերի վրայ դնե-
լով , 96 թուականին յեղափոխական մի-
եղութեամբ ՊԱՏԿԱՌՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄՈՎ
քոյն աւեց իր յեղափոխական զօրու-
թիւնը » :

Տրապիզնի ահաբեկիչի ԹՕՄԲԻՆ ու
պանքայի առանեթեան ՊՕՄՊԻՆ են այն
պատկառելիներն որոց զօրութեամբ ան-
տուն ու անաւել է Տրապիզոնցին , թըշ-
ուառ ու գժբաղդ է 250,000 Պոլսոյ հա-
յութիւնն : Աւերակ են Սամաթիա և
Խառդիւղ և արիւն կը լայ այսօր ամ-
բողջ հայութիւնը : Խեղճ , պատկառելի

մակդիր , ի՞նչ օրերու հասած ես . մաար
կտորէր հնարող վարպետին :

Բարերար Դաշնակցականի բարեճա-
ղիկ կօմիտէի Թուղթիկը , այսչափով չի
բառականանար , այլ իւր խելքի տապ-
րակը բանալով . դարից սկզբից , վաթ-
սունակաւ , ու քսունակաւ , ինկնաւեա-
կաւ քուակաւից և ուրիշ շատ մը անի-
մառ ու անմիտ իցերից ու ցիցերից
ետքը կուգայ կը հասնի սա եղբարկացու-
թեան և կարծեցեալ պատկառելիով ան-
պատկառ ու անամբօթ կերպով կը գօշ-
« Զիւալներ , դարչնի սողուններ , ցած
տարածներ , հացկատակ սողուններ ,
օձային գլուխներ , հոտած բուններ , ցե-
ցեր , ցած հոգիներ , հոտած շուններ ,
և պղծուած ձեռքեր » :

Այս ամեն մակդիրներու ճաշակը հա-
կնաբար ուսումը արուած է միայն կարգ-
մը կառկասահայ պտրոններու որոնք չը
կրնալով իրենց զօնիչոսական ծրագիրը
գործադրել իրենց ստան մէջ , իրենց քա-
ղաքին ու երկրին մէջ , իրենց անաղիւ-
վարքով չը կրնալով Ռուս չինովնիկ (պառ-
տօնեայ) գառնալ , սպրդած են մեր մէջ
միայն ու միայն իրենց գարտակ փորը
լեցնելու ու իրենց հեշտանքն ու հաճոյքը
պտարեբար համար յեղափոխականի

կեղծ շապիկին տակ մեր առնը քան-
գեղու, մեզի այս վիճակին հասցնելու և
իրենց հոտած սխտորը մեզ ծախելու:

Միութեան անուան առջեւ անտարա-
կոյս պէտք է ստեղծել այդ պարոնները,
զի միութիւնը ազգին փարոսը, լապտերը
պիտի ըլլայ որոյ ճառագայթներուն առ-
ջեւ երեւան պիտի դան իւրաքանչիւրին
գարշելի դործերն ու հաշիւներն: Միութե-
նը կը թշնամանեն, զի իրենցմէ
դուրս ելած միութիւնը՝ միութիւն չէ,
զի լաւ գիտեն թէ այդ միութեան զե-
կապարներն իրենք չը պիտի լինին, հու-
սակցութեան գանձարանին մէջ մկները
իրարու ականջ պիտի կրծեն և մեր այդ
պատկառելի ցուցայեղութիւնները
անօթի պիտի մնան, ահա այս սարսափն
է որ իրենց ազատ բերնին մէջ այդ քան
աղբոս մակդիրներ լեցուցած է սրտը
կը նետուին միութենասէր ժողովուրդի
վերայ:

Բայց դու, ժողովուրդ, մի՛ վհառիր,
չաբունակէ քու գործը, անմոտաբար մի՛
տար քու դրամը, մի՛ կերակրեր գրեզ
կրծող ցեցերը, ուտիճները: Հայ ժողո-
վուրդ, ժամանակ է զարթելու, լաւը
վատէն զաւագանելու, ազգասպանը ազ-
գասէրէն որոշելու: Հայ ժողովուրդ,
ճանչցիր քու դրամով, քու հացով ապ-
րող, բայց քեզի հայհոյող և քեզի խած-
նողներն:

Իսկ դուք, պարոններ, ձեր թւուցիկ
ու անթւուցիկ սրտառմաներով մի՛ վրդու-
վէք ժողովուրդի արդէն արիւնով լեց-
ուած սիրտն ու հոգին, ձեր խռնկն ու
մամը չափեցէք ու հեռացէք և մի՛ պըղ-
ծէք ժողովուրդի Մ. տաճարը, զի ինչ-
պէս ամէն բան նայեպէս և լրբութիւնն
ալ չափ մը ունի:

Յ. ՉԱՔՐԻՆԱՆ

ՄԷՁԵՆ

Բանին մէջ բան կայ, և արդարեւ ա-
կանջ կախեցէք թէ իրաւունք չունի՞մ,
եղբայրներ:

Դուք կը յիշէք ոնշուտ Սասունի սոս-
կաբէ ջարդը: Չէ՞ք յիշեր որ այդ ժամա-
նակ Դաշնակցականը զլայցան իրենց օգ-
նութիւն Հնչակիստներին, և ինչո՞ւ զլա-
յան եթէ նպատակնին մէկ էր, անկեղծ-
էին և ճշմարիտ հայ ազգասէրներ: Պօլ-
սոյ երկրորդ ցոյցին ալ Դաշնակցականը
իրենք ուղեցին օգնել և այս անգամ ալ
Հնչակեանք մերժեցին Դաշնակիստներին
օգնութիւնը: Ի՞նչու, եթէ նպատակնին
մէկ էր, անկեղծ էին և ճշմարիտ հայ
ազգասէրներ: Պանդայի ցոյցին ժամա-
նակ ալ Դաշնակցականը միտ մինակ
գործեցին, լուր չտուին Հնչակիստներին
և չուղեցին անոնց օգնութիւնը: Ինչո՞ւ
եթէ նպատակնին մէկ էր, անկեղծ էին
և ճշմարիտ հայ ազգասէրներ: Այս ը-
սածնեք իրողութիւններ են, որ ժա-
մանակին շատեր գիտեցին և Հնչակ ու
Դրօշակ ալ ժամանակին գրեցին: Հիմայ
դու ըսէ, եղբայր, եթէ այս երկու ընկե-
րութիւններ միեւնոյն նպատակի կը ծա-
ռայէին, եթէ իրօք կաշխատէին, որ հոյ-
րենիք ազատի, ինչո՞ւ չմիացան թշնամ-
ւոյն դէմ, ինչո՞ւ մերժեցին մէկըմէկու
օգնութիւն, մենչեւ եթէ միանային կը
հաւատամ, որ քիւրտն ու թիւրքը չը
պիտի կրնային այնչափ յանդգնաբար
գործել: զի եթէ մին ի Սասուն գործէր,
միւսն ալ մի ուրիշ տեղ պիտի գործէր,
և այսպէս մի քանի տեղերէ միանդա-
մայն շարժելով, պիտի կրնային շփոթել
թիւրքը, ջլատել նորա ուժը և թերեւ
բարձրովն տարբեր վիճակ պիտի առնէ
ազգային դատին:

Բայց ի՞նչ կ'ըսեմ, . . . ի՞նչպէս միա-

հային այս մարդիկ, երբ ամէն բանէ աւելի անոնց մէջ եւ ընկմի, եւ ջրիի, ոգին կը տիրէր, որովհետեւ ասոնք կը կտրծէին թէ քիւրար եւ թիւրքը թուղթէ, մեղանէ, պօռալ-գոռալէ վախցող մարդիկ են եւ Հայաստան շատ դիւրաւ պիտի աղատի եւ իրենք՝ այդ խեղճ իսկներ, մեյլմէկ պզտիկ քաղաւոյններ պիտի լինին. եւ այնպիսի երազներ տեսնող ո՞ր մարդ իւր բերնէն կը ձգէ խոշոր պատառները:

Քայց մարդս սխալական է. ասոնք տեսնան, որ շատ սխալած են իրենց հաշիւներին մէջ, ուղեցին զեկը գարձնել, ժողովուրդն ալ տեսներով այս բաներ ինք ալ սկսաւ կամայ կամայ արթննալ եւ հարցնել թէ որդարեւ եթէ այս ընկերութիւններ միեւնոյն նպատակն ունին ինչո՞ւ չեն միանար, որով կամայ կամայ ալ նիւթական օգնութիւնք պակասեցան այնպէս, որ կ'ըստի թէ վերջին օրերս հային քիւրն՝ Լօնտօնի եւ ժընէվի Հայ Յեղ. գօմիդէաններին մէջ 1/2 ֆր. իրար ճրայցած է, պիւրօներն ալ այս սովին առաջն տանելու համար այնպէս ուրջած են եղեր, որ այլ եւս միութիւն գործեն ինչպէս ժողովուրդը կը փախաքի — հակառակ իրենց փախաքանոց — եւ ասոր համար ալ ժողովներ բրած են, պատգամաւորներ գրկած են ասդին անդին, որ ժողովուրդը չյուզուի եւ շարունակէ իւր օգնութիւն, ոչ թէ ղէնք, սուր առնելու, այլ այս անգամ մեր իսկներն անօթութենէ ողատելու պայմանաւ որ ի մնաց պիտի լուծուի միութեան խնդիրն . . . եւ Հայաստան ալ շուտով պիտի ազատի:

Ի՞նչ կ'ըսես այս վարդեա գարձաւածքներին, հայ եղբայր, կը հաւատաս, որ մեր իսկներ միանան եւ այնպէս գործեն եւ վերը գրածներս ուշադրութեամբ կարգաւ դու քննէ որչէ թէ կարելի է

այն միութիւն, որուն վրայ այսչափ կը խօսին, կը գրեն, կը պօռան, կը դռան:

Ես որ մէջէն եմ չեմ կրնար հաւատալ երբէք, որ այդ մարդիկ անկեղծօրէն միանալ ուզեն. զի բանին մէջ բա՛ն կայ, բա՛ն:

ԾԱՆՈԹ

ՓՈՐՐԻԿ ՆԱՄՍԿՆԵՐ

2

Հայ ժողովուրդը ուզում էր ազատուել տաճկական լծից: Սա էր նրա դարեւոր սարկական կեանքից յառաջացած պահանջը: Ուրեմն նրա ամբողջ ոյժը պէտք է կեդրոնացած լինէր այս միակ նպատակի մէջ: Նրանից ծնած յեղափոխականների միակ նպատակ պէտք է լինէր ժողովուրդի այդ պահանջը երկարացնելու համար միջոցներ գտնել, որիչ խօսքով ուսումնասիրելով ժողովուրդի կեանքը, նրա թէ բարոյական եւ թէ նիւթական ոյժը, նայնպէս մանրամասն ուսումնասիրել թշնամու ոյժը եւ այդ մանրաւերկիւր ուսումնասիրութեանց վերայ կազմել գործունէութեան ծրագիրը: Քայց որովհետեւ աշխարհիս վերայ միայն հայերն ու նոցա տիրապետողները տաճիկները չեն ապրում այլ եւ որիչ ազգեր ուրոնք նոյնպէս իրենց շահերով կապուած են Տաճկաստանի հետ եւ բաց ի դրանից ամենապարզ հաշիւը մեզ ցոյց կը տար որ մենք մեր ոյժերով, եթէ Տաճկաստան միայն մեզ հետ գործ ունենայ անկողող ենք նրա հետ կռուել, ուրեմն մեր ծրագիր կազմողները աչքի տառ պէտք է ունենային Եւրոպայի հաշիւներ եւ կազմակերպելով իրենց ոյժերը պատահած հանգամանքներից աշխատելին օգտուել: Սա էր դեռ տասնեակ տարիներ առաջ Հայ-հայրենասեր յեղափոխականների նպատակը: Իսկ դրա փո

խարէն մեզ ի՞նչ ծրագիրներ տուին : Պատանիներ , որոնք դեռ գաղութական նստարանների վերայ էին , որոնք նոյն իսկ հայերէն խօսել չէին գիտեր , որոնք Չինաստան ու չինացիներին աւելի լաւ կը ճանչնային քան թէ Հայաստան և հայերին և իրենց կրթութեան պայմանների շնորհիւ ենթարկուած լինելով եւ րոպական յեղափոխականների ազդեցութեան , նոքա մեր լոկ ազգային անկախութեան օտար լծից ազատուելու պահանջը ըմբռնեցին եւրոպական յեղափոխութեան մտքով : Ի՞նչ է եւրոպական յեղափոխութիւնը : Աշխատանքի և կապիտալի կռիւ , բռնաւորի և կապիտալիստի կենաց և մահուան պայքարը : Եւրոպան իւր անցեալի (բայ ի Ռուսաստանից) աստիճանաբար զարգացմամբ դասակարգային կռիւներով հասաւ այս օրուսան , մի կողմ բուրժուազեան իւր կապիտալով , միւս կողմ բանուոր իւր աշխատանքով :

Ահա նոցա կռիւը : Եւրոպական յեղափոխականը կուռում է յանուն աշխատանքի կապիտալի բռնակալութեան դէմ : Իսկ մենք ի՞նչի դէմ էինք կուռում : Տաճկաց բռնակալութեան դէմ : Ի՞նչ նմանութիւն կայ երկուսի մէջ : Ոչ միայն Հայաստանում այլեւ ամբողջ տաճկաց կայսերութեան մէջ դասակարգային կռիւ կայ այն մտքով օրինակ Գերմանիայում : Չեզեմ հարցնում և կեդրոններ և բիւրօններ մի՞թէ Տաճկաստան հասել է անտեղական այն ֆազին , որը յայտնի է կապիտալիստիկական շրջան անունով : Բայց , որովհետեւ դուք Տաճկաստան ասելով երեւակայում էք կամ Գերմանեան և կամ Ֆրանսեան , Չեզ եմ հարցնում կ. Պօլսեցի զանազան ընկերավարական-սօցիալիստներ : Բայց դուք էլ այնքան խեղճ էք , չը նայելով Չեր մեծախառն

թիւներին մտաւորապէս այնքան աղքատ էք , որ վ. Հիւկոյին կամ Ալէքսանդր Դիւմա հօր համարում էք սօցիալիզմի հիմնադիրներ , ինչպէս մի Պօլսեցի , սօցիալիստն ինք ասում էր : Խեղճ « հոս-հոսներ » ճոճոտն բառեր , մեծ-մեծ խօսքեր Չեր վերայ այնպէս են ազդում , ինչպէս Ամերիկայի վայրենու վերայ Եւրոպացու ապակիներն էին ազդում : Մեր կռիւը Հայրենիքի անկախութեան կռիւ է , մենք դասակարգային կռիւ չունինք : Իսկ մեր « կեդրոններ-բիւրօներ » թարգմանեցին բառ առ բառ Եւրոպական յեղափոխականների , այն էլ ուսաց 70 թ. գերի յեղափոխականների ծրագիրները և մեզ հասցրին այս օրուսան . . . Սա մտքի ստրկութիւն է , ստրկութեանց ամենալաւը :

Իսկ , դու ժողովուրդ-վաղեցիւր նոցա յետեւից , առանց հասկանալու ո՞ւր , ի՞նչ են ուղում : Տգիտութիւն միշտ այդպէս է , չը հասկցած բանք տեսիլ դուր կը գայ : Դեռ մենչեւ այսօր հայ ժողովրդի համար ամենալաւ ուսուցիչը նա է , ով շատ « խրթին » գրաբառ դաս կը տայ վարժատան . . . Չը հասկցածը միշտ աւելի տրժեքաւոր կը լինի :

Լ.ԻԳ

Ա Կ Ն Ա Ր Կ

Մեր հայութեան փրկարար
Լոկ միութիւնն է եղբայր ,
Միութենէ խուսափի՛ւ ,
Է միշտ դիւար լքանել :
Օ՛հ , միանանք ձեռք ձեռք ,
Այս մեր կոչումն հայեցի ,
Ուր միութիւն , անդ եւ կայ ,
Անդ զօրութիւն վեհափառ :
Միութենէ ով տայ խոյս ,
Այն ազգ մնայ ապագոյս ,
Այն ազգ չունի ապագայ ,
Ում պատմութիւնն է վկայ :
Այս իմ վերջին հրաւեր ,
Զոր ձեզ կ'ուզեմ , ո՛վ հայեր :

ՊԵՐՃ

Отговорникъ : П. Глушковъ.

Печатница К. Николовъ. — Варна.